ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-73

«22» 05 2018թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2019 թվականի մայիսի 17-ի թիվ 6-Ա որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2019 թվականի N6 -Ա

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ, ՄՈՒՍԱԼԵՌ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 197 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ՎԱԶԳԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 25,61ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ , ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՄԻՆ

Ոսկեհատ համայնքի Մուսալեռ փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 197 քմ մակերեսով հողամասի վրա 2019թ. Քաղաքացի Վազգեն Գրիգորյանի կողմից ինքնակամ կերպով կառուցել է 25,61 քմ արտաքին մակերեսով ավտոտնակ շինությունը, որի ընդհանուր ներքին մակերեսը կազմում է 22,7 /ծածկագիր 04-081-023-009/: Համաձայն ՀՀ Կառավարության 24.12.2003թ. թիվ 1847-Ն գրության որոշման շինության զբաղեցրած 197 քմ մակերեսով հողամասը համայնքին է փոխանցվել, որպես բնակավայրերի այլ գործառնական նշանակության հող: Ավտոտնակի շինությունի զբաղեցրած 197 քմ մակերեսով հողամասը և ինքնակամ կերպով կառուցված 25,61 քմ արտաքին մակերեսով շինությունը չեն խոչնդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չեն դասվում ՀՀ<<Հողայի օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ:
Հաշվի առնելով վերոնշյալը և քաղաքաշինական խորհրդի դրական եզրակացությունը և ղեկավարվելով 18.05.2006թ. թիվ 731-Ն որոշման, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման թիվ 33,թիվ 33.1 և թիվ 33.2 կետերի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Ոսկեհատ համայնքի սեփականության իրավունքը Ոսկեհատ գյուղի Մուսալեռ փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 197 քմ մակերեսով հողամասի վրա, Վազգեն Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված 25,61քմ ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակի շինության նկատմամբ /ծածկագիր 04-081-023-009/:
2. Ճանաչել օրինական Ոսկեհատ համայնքի Մուսալեռ փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 197 քմ մակերեսով հողամասի վրա, քաղաքացի Վազգեն

Գրիգորյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 25,61քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, որի ներքին մակերեսը կազմում է 22,7քմ /ծածկագիր 04-081-023-009/:

3. Ոսկեհատ համայնքի Մուսալեռ փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 197 քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի Վազգեն Գրիգորյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 25,61քմ ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակի շինությանը տալ հետևյալ հասցեավորումը. Արմավիրի մարզ Ոսկեհատ համայնք, Մուսալեռ փողոց թիվ 38/2:

4. Ոսկեհատ համայնքի Մուսալեռ փողոց թիվ 38/2 հասցեում գտնվող 197քմ մակերեսով հողամասը հանել բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողերի շարքից և դասել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարքին /ծածկագիր 04-081-023-009/:

5. Առաջարկել Ոսկեհատ համայնքի Մուսալեռ փողոց, թիվ 38/2 հասցեում գտնվող 197քմ մակերեսով հողամասի վրա 25,61քմ արտաքին մակերեսով ինքնակամ ավտոտնակի շինության շինարարությունը իրականացրած Վազգեն Գրիգորյանին, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 4-րդ հոդվածի 35-րդ կետի, ուղղակի վաճառքով գնել 197քմ մետր մակերեսով հողամասը 1 քմ 1914 ՀՀ կադաստրային արժեքով 377,058 / երեք հարյուր յոթանասունյոթ հազար հիսունութ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ,իսկ 25,61 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի շինությունը՝ 1քմ 1700 ՀՀ դրամ կադաստրային արժեքով՝ 43.537 /քառասուն երեք հազար հինգ հարյուր երեսունյոթ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

2019թ. մայիսի « 17»

գ. Ոսկեհատ